



Ինչպես կարող եք օգնություն ստանալ FEMA-ից և ապահովագրությունից

1. Գրեք Ձեր ամբողջ կորուստները և այն թե ինչ է Ձեզ ներկայումս հարկավոր Օրինակ՝ հագուստներ, ավտոմեքենա, սառնարան, բազմոց, աթոռներ, մահճակալներ: Դուք հնարավոր է նաև անհրաժեշտություն ունենաք նոր ապահով բնակարանի և վարձավճարի օգնության: Ներառյալ առողջությանը անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են դեղեր կամ քայլակներ:

2. Դիմեք FEMA- ին մինչև վերջնաժամկետը

Առցանց: disasterassistance.gov կամ զանգահարեք՝ 866-621-3362:
Վերջնաժամկետը աղետի մասին հայտարարությունից վաթսուև օր է: (Տեղադրեք ամսաթիվը)

3. Լուսանկարեք բոլոր վնասները:

Դա արեք նախքան մաքրություն անելը

4. Դուք պետք է տանը լինեք երբ FEMA- ի տեսուչը այցելի ձեզ:

Ցույց տվեք նրանց ամեն ինչ, բոլոր վնասները, տեղեկացրեք նրանց այն ամենի մասին ինչը Դուք կորցրել եք: Եթե ունեք նկարներ ապա դրանք էլ նրանց ցույց տվեք: Ասեք նրանց թող արձանագրեն այդ ամենը: Եթե տեսուչը չարձանագրի որոշակի վնասներ ապա հնարավոր է Դուք օգնություն չստանաք այդ վնասների համար

5. Պահեք աղետի տետր

Հետևե՛ք ձեր գործընթացին: Ցուցակագրեք Ձեր ապահովագրության և FEMA-ի դիմումների համարները: Ցուցակագրեք Ձեր բոլոր զանգերը, ամսաթիվը, հեռախոսահամարը, անձի անունը ում հետ Դուք խոսել եք և թե ինչ են նրանք ասել Ձեզ:

6. Պահեք ստացականները որոնք ունեք կապված վերանորոգումների, փոխարինումների կամ վարձավճարների հետ:

Հնարավոր է հետագայում ձեզ դրանք անհրաժեշտ լինեն, որպեսզի ցույց տաք որ FEMA-ի կամ ապահովագրության գումարները դուք տեղին եք ծախսել

7. Պահեք բոլոր կարևոր փաստաթղթերը ապահով վայրում
Միգուցե դրանք սկանավորեք մոտակա գրադարանում: Ներառեք՝ վարձակալությունները, վաճառքի թերթիկները, հաշիվները, ստացականները, չեղյալ հայտարարված չեկերը և նամակները որոնք ուղարկել կամ ստացել եք FEMA-ից, SBA-ից կամ ցանկացած այլ գործակալությունից:

8. Հաճախ առցանց ստուգեք Ձեր FEMA- ի հաշիվը

Աղետից հետո դուք հնարավոր է տեղափոխվեք: Տեղեկացրեք FEMA-ին եթե տեղափոխվել եք: Առցանց հաճախ ստուգեք Ձեր FEMA-ի հաշիվը: Երբեմն մարդիկ չեն ստանում նամակներ, քանի որ տեղափոխվել են: Նաև կարող եք զանգահարեք FEMA-ին ստուգելու համար:

9. Մերժում? Բողոքարկեք մինչ վերջնաժամկետը

Դուք ունեք 60 օր ժամանակ, սկսած այն օրվանից որ դուք ստացել եք FEMA- ի նամակը: Ստորև նշված Թեժ Գծի փաստաբանները կարող են օգնել Ձեզ բողոքարկելու համար:

10. Դիմեք նոր ստուգումների եթե FEMA- ն հրաժարվում է ձեզ օգնել քանի որ տեսուչը չի արձանագրել բոլոր վնասները:

11. Չանգահարեք մեզ

Մենք ունենք անվճար փաստաբաններ ովքեր կարող են օգնել FEMA- ի դիմումների, ուշացումների, բողոքարկումների կամ այլ իրավաբանական խնդիրների դեպքում:

**Չանգահարեք NLSLA-ին Աղետների
Օգնության Թեժ Գծին 1-800-870-0732**

**FEMA-ի Թեժ Գիծ
1-800-621-3362**